

նէն : Բայր Տրայիանոսի միտքը ոչ այն-
չափ զանիկայ թագաւորութենէն զըր-
կել էր , որչափ զինքը խոնարհեցընել .
անոր համար նորէն պատուիրեց որ կան-
չէն թագաւորը , և հանդիսիւ ատեան
նստելով՝ ուղեց որ հոն խոնարհաբար
ամենուն դիմաց Պարթամասիր խնդրէ
իրմէ թագը : Բայն ատեն Պարթամա-
սիր՝ որուն սիրտն ալ ձեռքերուն պէս
բաղդէն արդիւրած չէր , և գիտէր որ
որչափ ալ իրաւունք չունենար՝ գոնէ
Տրայիանոսէն աւելի իրաւունք ունէր
այն աշխարհքներուն տէր ըլլալու , ուր
որ ծնեւ էր արքունեաց մէջ , և տեղա-
ցւոց խօսքը կը հասկընար , պատասխա-
նեց քաջ Բրշակունւոյ մը պէս . “ Ես
ոչ Հռոմայեցւոց գերին եմ , և ոչ ալ
պատերազմի մէջ յաղթուած . հապա
իմ ազատ կամօքս ելայ եկայ Հռոմայե-
ցւոց հաւանութեամբ դնելու այս թագս ,
ինչպէս որ ինձմէ առաջ Տիրիթ թա-
գաւոր Վերոնէն խնդրեց և ընդունե-
ցաւ . չէի կարծեր որ հիմայ Հռոմայե-
ցիք այս բանիս դժուարութիւն ընեն ” :
Բայն խօսքերս՝ ինչպէս յայտնի է , Տը-
րայիանոսի հպարտութիւնը խոր խոցե-
ցին . անոր համար ինքն ալ սեգ պա-
տասխան մը տուաւ . “ Հայաստան՝
Հռոմայեցւոց գաւառն է , իրեն կիլի-
նայ անոր թագաւոր դնելու , որուն կ'ու-
զէ՝ անոր կու տայ ” : Բայն ըսելով մէկ
դի հանեց Պարթամասիրը , և անոր
մարդիկներովը մէկտեղ՝ զրկեց Պար-
թեաց թագաւորին , հետն ալ գունդ
մը ձիաւոր դնելով՝ որ զգուշանան չըլ-
լայ թէ փախչի թագաւորը . իսկ Հայոց
խօսք տուաւ որ ինքը կը հոգայ իրենց
բանը , և խրատեց որ հանդարտ նստին :
— Բայց Պարթամասիրայ սիրտն ալ
չէր կրնար հանդարտ կենալ . նորէն
ջանք ըրաւ թագը ձեռք ձգելու , պա-
տերազմ բացաւ , բաղդը չյաջողեց , մե-
ռաւ պատերազմին մէջ , կամ հոն ձեռք
ընկած՝ սպաննուեր է , ինչպէս որ Հը-
ռոմայոր գտուած հեղինակի մը գրուա-
ծոց կտորները կը ծանուցանեն :

1 Փրոնտոնիոս , զոր մեծանուն բազմահմուտ
Կարգինալն Մայ գտաւ :

Պարթամասիրայ պատկերը տունուած
է Հռոմայ մէջ Կոստանդիանոսի յաղ-
թական կամարին վրայէն , բարձրա-
քանդակ փորուած , որ առաջ՝ ի պատիւ
Տրայիանոսի փորեցին՝ Պարթամասիրը
աղաչաւորի կերպարանքով իրեն դիմա-
ցը եկած , ինչպէս առջի անգամը . վեր-
ջը Կոստանդիանոսին կամարին փոխա-
դրեցաւ արձանը : Բայն դէմքս արուես-
տագիտաց շատ յարգոյ և պատուական
է . և կը վկայեն թէ ոչ Յոյնի և ոչ
Հռոմայեցւոյ կերպարանք է , հապա
բուն Պարթամասիրին պիտի ըլլայ , ի-
րեն զգեստին ձևովն հանդերձ . գծա-
գրութիւնն ալ կը ցուցընէ հանճարեղ
գլուխ մը կատարեալ վայելչութեամբ .
անոր համար զատ ալ վիմանկարել տը-
ւինք այն գլուխը որ իրեք տարի Հայաս-
տանի մէկ մասին թագն կրեց , և իրեն
դժբաղդութեան պատճառաւ՝ զմեզ
բաղդաւոր ըրաւ Հայոց թագաւորի մը
հին արձանն ունենալու , թէպէտ չու-
զած տեղ մը , ուր որ ուրիշ Հռոմայ
կայսերաց Հայաստանի մէջ կամ անոր
դէմ ըրած քանի մը գործքերն ալ դրոշ-
մած են :

Հ . Դ . Ծ

ԼՈՒՐ ԵՒ ՏԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գ .

Լըզնիս :

Լըզնիս կամ Լըզնիս և ըստ լուր-
բաց Լըզնիսեան՝ հին Հայոց Լըզնիս
աւանն է , և Հայաստանի ամենէն հա-
ճոյաբնակ քաղաքն իր բարեխառն կլի-
մայովն , անուշ օդովն , պայծառ ջրե-
րովն , բարեբեր հողովն . որով ամենուն
ալ ցանկալի կրնար ըլլալ թէ որ երկու
վախ ալ չունենար , մէկ մը իր գետնէն՝
որ հրաբուխներու բարեկամ և անհա-
դարտ շարժող է , մէկ մ'ալ իր դրացի
Վիւրտ բնակիչներէն , որոնց երակին
մէջ ալ սասանեցուցիչ հրաբուխներ կը
բալեն : Վաղքին անունով գեղեցիկ



1. Plutarch's description

լուսնաձև հովիտ մը կայ տարածուած , երկայնքը ութ ժամու չափ , լայնքը՝ իրեք , չորս դին բլուրներ ու լեռներ շարուած կարծես իր գեղեցկութեամբը կը զմայլին , իրենք ալ պակաս գեղեցիկ չըլլալով . հարաւային կողմէն կը տարածուին Տուփիկ լեռներն տեղ տեղ կանաչ տեղ տեղ սև , երբեմն չոր երբեմն դալար կողերով , սիրուն ու ահաւոր տեսարաններով դէպ ՚ի Վերջանու գաւառը կ'երթան . փէշերնին դէպ ՚ի հովիտը փռած են , վրանին բազմաթիւ գեղեր պարտիկաց և ծառաստանաց մէջ կը ծիծաղին , կարծես թէ ծաղիկ քաղելու ելած անձինք ըլլան . որոնց ետեւէն լեռանց հարաւային անտառածայր գագաթները երբեմն քեզի սև սև զմբէթներու պէս երկինք քաշուած կ'երևնան , երբեմն թուխ ու կանաչ վարագուրի մը պէս Նըզնկայի հորիզոնը կը չափաւորեն , լ'ընեւթէն հեռուէն բարձր հայոց լեռները ամպերու պէս երբեմն կ'երևնան երբեմն կը ծածկուին . արեւմուտքէն ալ հեռու չէ սրբազան Սեպուհը , որ կարծես թէ դեռ Սուսաւորչայ վերջին շունչերը կը շնչէ Նըզնկային վրայ , ուր որ առջի անգամ հայաստանի վրայ քրիստոնէութեան շունչերն փչեր էր . հիւսիսային հեռու տահմաններէն ալ Վայլ գետը անդադար ճամբորդի մը պէս գալով՝ դէպ ՚ի քաղքին արեւմուտքը կը մօտենայ , բայց չի հասնիր այնչափ մօտ՝ որչափ կը հասնէր ասկէ 2000 տարի առաջ , և անկէջ ալ դէպ ՚ի հարաւ երթալով կը խառնի եղեմական Նիքրատ գետոյն ծեր ու ծաղկած ծոցը , որ այս կողմերս Դրատ կը կոչուի , և բուն Նըզնկայի մօտիկ՝ Սեւ ջուր կ'ըսուի յայլազգեաց : Լ.յս ջուրը որ հովտին պտղաբերութեան մեծ օգնականն է՝ անոր եզերքներէն առաջ կուգայ՝ լեռանց ստորոտիցը քծնելով . ուր որ շատ տեղ քարոտ ճամբու պատահելով՝ երբեմն հանգարտօրէն իբր աստիճան ընելով այն քարերէն կ'անցնի ձիւնափրփուր ալիքներով . երբեմն ալ սրդողածի պէս ուժ տալով կ'անցնի կը վազէ անոնց մէջէն , հետն ալ մեծ մեծ

քարերու կտորներ ոչ անախորժ դղրդմամբ մը քշելով տանելով . ինչուան որ անոնցմէ ազատած երթայ իր գլխաւոր պաշտօնը կատարէ հովիտը խմցնելով : հովիտը որ ներսէն հրաբլիսի երկրի մը բարեյարմար տաքութիւնն ունի՝ դրսէն ալ այս անուշ ջուրը գտնալով՝ կը բանայ ծոցը ամէն տեսակ ընտիր պըտուղներ բղխելու , որոնք ինչուան Վարնոյ կողմերը և ուրիշ կողմեր ալ կը դըրկուին : Ընմ կրնար զրուցել թէ պըտոց տեսակն աւելի է հոս թէ ազնուութիւնն . բայց ետքինս կը յաղթէ . ինչ որ կը բուսցնէ՝ ամէն ալ ընտիր է , խաղող , թուփ , դեղձ , սալոր , տանձ , խնձոր , մեղրապոպ , և այլն . ինչուան թղենի ալ . և թէպէտ ցորենի գաւառ չէ , բայց ունի պատուական ընդեղէններ ալ . հունձքն ալ կլիմային և գետինն ուժովը՝ կանուխ կը հասնին : Բայց պէտք չէ մոռնանք Նըզնկայի պտոց մէջ՝ իր համեղ փափուկ ծիրանեգոյն ծիրանն ալ , որ արեւմուտքի աշխարհքը պտոց մէջ հայկական անուամբ կը պատուի . անշուշտ այս հովտիս ծիրանն էր որ Սեւկուղղոսի և իր հռոմայեցի զօրքերուն ախորժակը զմայլեցուց , և հետերնին առած Ստալիա փոխադրեցին անոր կուտերը , թերևս հայաստանէն շահած ամենէն մեծ աւարնին աս ըլլալով , և ինչուան հիմայ հոն Լ'ըմենիաքա անունը կը պահէ : Սլակու թիւնը հարիւրի չափ գեղերու յանձնած է , որ վերոյիշեալ լեռանց և հովտին մէջ սփռած են . բայց վայելքին կշեռքն երբեմն Վիւրտերուն նիզակովը կը կըշուուի : Լ.յս ազգը հոս երկու ցեղ ունի , Պալաուան և Շեխ հասան կամ հիւսէյին ըսուած , որ ձմեռները կ'ինջնան շէնքի տակը , լաւ եղանակները լեռներուն մէջ կ'անցընեն իրենց հօտերովը՝ որոնց պարարտ արօտներ կան լեռնագաշտակներուն մէջ . զրեթէ անկախ ինքնագլուխ կը տիրեն այս կողմերուս . 1000⁶ չափ զօրք ոտք կը հանեն . լեռանց նեղ անցքերը բռնած են և ճամբորդներէ անցու հարկ կը պահանջեն . Սուսաւորչայ ուխտաւորներն ալ՝ ուխտէն ա-

ուջ այս անհաճոյ հարկը պէտք է տան . բայց դեռ երջանիկ են որոնք որ նեղութեան քրտինքով արիւննին կը գնեն . վասն զի Վիւրտին նիզակը սուր է . անոր համար հիմայ շատ գեղեր անմարդաբնակ եղեր են :

Պառնանք հիմայ քաղքին , որ հովտին արեւմտեան անկիւնը նստած է , և գեղերուն պէս զուարճալի տեսք ունի , կանաչութեամբ զարդարուած . տուներն ալ որ 3000էն աւելի են՝ բաւական վայելուչ են տեսքով : Վաղքին կառավարողն է պէյ մը Լըզուումայ փաշայութեան տակ , բայց անկէ անկախ : Ընակչաց իբրեւ երրորդ մասը մերազգիք են , մնացածքն մահմէտականք : Վանի մը եկեղեցիներէն զառ Լըզնկա նշանաւոր շէնք մը չունի և ոչ հնութեան արձան , խիստ շատ անգամ երկրաշարժներէ կործանած ըլլալուն համար , որ ոչ հեթանոսութեան ատեն կանգնած շէնքերուն և ոչ քրիստոնէութեան առջի դարերուն սրբազան եկեղեցեաց խնայեց :

Սեր պատմութեան մէջ Վրիստոսէ դար մը առաջ կը սկսի Լըզնկայի անունը և փառքը . այն ատենները Լըզնկանունով քաղաքաւան մըն էր , Լեկեղեաց գաւառին գլխաւոր տեղը : Լըտաշէս Ա մեր թագաւորը՝ որ Լըամ հայկազուն նահապետէն ետեւ առաջին աշխարհակալ և ծովակալ եղաւ , Յունաստանի տիրած ատեն հոն գտած տաճարներուն մէջ հարստութեամբ և ճարտարութեամբ երեւելի կուռքերուն շատը՝ Հայաստան զրկեց . ասոնց մէջ կար Լըտեմեայ կամ Լընաշտայ արձան մ'ալ , որ կը կարծուի այն հռչակաւոր արձանն՝ որուն համար հիները կ'առասպելէին թէ երկրնքէն ինծած էր և Վրիմու Տաւրիդեան կողմերը կը պաշտուէր հազար տարիներով առաջ . Տրոյայ պատերազմէն ետեւ Լըամեմոնի Յունաց առաջնորդին աղջիկը Լիփիդէնիա հոն փոխադրեցաւ Լընաշտայ ձեռքով որ իր տաճարին մէջ ծառայութիւն ընէ . վերջը երբ իր Սվրեստէս եղբայրն ալ այն կողմերն ընկաւ նաւակոծութեամբ ,

մէկտեղ կուռքն առին փախուան , եկան յԼըգոս Յունաստանի ու հոն կանգնեցին , որ բոլոր Յունաստանի մէջ մեծապաշտօն եղաւ : Հազար տարի անցնելէն ետեւ մեր Լըտաշէս զաս ալ առաւ Յունաստանէն և զրկեց ի հայաստան . և դեռ հրաման չտուած իւր կանգնելուն վրայ , ինքը մեռաւ Յունաստանի կղզեաց մէջ . զկուռքն ալ Հայաստան բերողներն՝ Լըզնի մօտիկ Լընի ամրոցը պահեցին , հանդերձ յոյն քուրմերով որ չէին ուզած անկէ զատուելու . որ Տիգրան Բ իր հօրը տեղ անցնելով , հրամեց որ Լընիէն հանեն կուռքը և Լըզնի աւանին մէջ կանգնեն : Հայք որ շատոնց Լընաշտայ քերթաւանդն էին՝ մեծ յարգութեամբ սկսան պաշտել այս կուռքս , թագաւորներն ալ գաւառին շատ երկիրները՝ տաճարին կալուածք տուին , անոր համար բոլոր այն երկիրներն Լընաշտական գաւառ ըսուեցան , և մեհեններով ու քուրմերով լցուեցան . ամէն կողմէ նուէրքներն կու գար այս տաճարներուն : Լըս նուիրաց հետ զիցուհւոյն նուիրած եղներ ալ կային , որոնցմէ ճերմակներն և ընտիրներն իրեն հաճոյագոյն զոհ սեպուած էր . ասոնց ճակատը ջահաձե խարան զարկած՝ որ ոչ ոք չի դպչի՝ կը թողուին որ խումբ խումբ արածին Լիփրատայ և Վայլի խոտաւէտ ափունքները . գուցէ այս պատճառաւ է որ քաղաքը Լըզնկայ ըսուած է՝ այսինքն եզին կայք : Լըզնի բնակչաց մեծ մասը և քովինները՝ Լընաշտայ ծառայութեանը նուիրուած էին իբրեւ քուրմ և ծառայողք տաճարներուն մէջ , նուիրաբերաց և ուխտաւորաց , և տօները կատարելու հանդիսի . գարնան և աշնան մէջ մեծահանդէս թափօրով ջահերով կը պտըտցընէին կուռքը մեհենէն դուրս չորս դի . յատուկ Լընաշտայ մեծ տօնը նաւասարդի 15ն կը կատարէին , 15 օր տարեգլխէն կամ Լըամազդայ տօնէն ետեւ , որով կ'երեւայ ալ թէ Հայք եօթնօրեայ շաբաթական շրջան ունէին , և Լըամազդէն վերջը Լընաշտին էր իրենց մեծ աստուածը . ինչպէս որ Տրդատ թագաւոր

տորն ալ իր դիցամոլութեանն ատեն մեղադրելով կ'ըսէր ի ուսաւորչայ . « Սե-
 ,, ծի Մնաստայ տիկնոջ , որ է փառք
 ,, ազգիս մերոյ և կեցուցիչ . զոր թա-
 ,, գաւորք ամենայն պատուեն , մանա-
 ,, լանդ թագաւորն Յունաց . որ է մայր
 ,, ամենայն զգաստութեանց , բարերար
 ,, ամենայն մարդկան բնութեան , և
 ,, ծնունդ է մեծին արի Մրամազդայ . . .
 ,, որով կեայ և կենդանութիւն կրէ եր-
 ,, կիրս Հայոց » : Մյս խօսքերէն կը
 տեսնուի որ Հայոց Մնաստայ սեպուած
 էր Մթենաս , մայր զգաստութեանց ,
 ինչպէս Պղատոն ալ Տիմէի զրոյ մէջ
 Մթենաս կըսեպէ զՄնաստայ Միթ ա-
 նուանելով լոգիստական կոչմամբ . բայց
 իմաստնոց մէջ շատ վէճ կայ Մնաստայ
 վրայ , և հաւանական կ'երեւայ որ Հայոց
 հին Մնաստը՝ Ա Տիգրանայ ատեննե-
 րը՝ Մտրոնոց դիցուհւոյն նման Մնութե-
 աստուած էր , շատ տեղ ալ Յունաց
 Մրտեմիս կամ իդական լուսին սե-
 պուած , իբրեւ քոյր Սիհր աստուծոյ ,
 այսինքն արեւու :

Երբոր Տրդատ Յունաստանէն գալով
 մտաւ Հայաստան հալածելով զՊար-
 սիկներն , առջի պարտքը սեպեց Մնաս-
 տայ պաշտօնը , զոր և կատարեց հանդի-
 սիւ , և ալ աւելի պատիւ մ'ալ ընելու
 համար՝ հրամանեց Պրիգոր ի ուսաւոր-
 չայ՝ որ այն ատեն իր ծառայութե մէջն
 էր և իրեն սիրելի , որ ուրախութեան
 սեղանին վրայէն ծաղկներն առնու և
 նոր տերեւներ ալ կտրելով՝ տանի Մնաս-
 տայ բազմին նուիրէ : Մնաստայ հրամա-
 նիս վայրկեանն էր ի յաւիտենից դի-
 տուած մեր ազգին հոգեւոր ծննդեանը :
 Մէն ի ուսաւորչայ օրդոց պէտք է
 յայտնի ըլլայ՝ այն հրամանէն ետքը պա-
 տահածներն , որով և աւելորդ մեղի հոս
 կրկնեն . միայն չեմք կրնար լռել մեր
 անձնական զուարճութիւնը երախտա-
 դիտական պարտքի մը պէս , որ մեր սի-
 րահարօտ հայրենեաց այց ելած ատեն
 նիս՝ առաջին մեծ տեսարանն եղաւ այս
 տեղս , ուր իմ հոգւոյս սերմն ալ 1500
 տարի առաջ ծեր էր իմ ի ուսաւորչիս
 շնչին մէջ , և առջի կոխած դաշտերս

Հայաստանի մէջ իր սուրբ արեամբ
 ուղղութեանն էին . աւելի անոնց կա-
 թիւներովն էր հոն գրուած գաւառ ի ու-
 սաւորչի՝ քան թէ զրոյ աւանդութիւն .
 հոն յղացաւ Հայոց հոգեւոր անձնաւո-
 րութիւնը , որն որ 14 տարի Մրտաշա-
 տու վերապին մէջ երկնելով՝ ընծայուե-
 ցաւ ի ազարշապատու դաշտին մէջ : —
 Որչափ փոխուած էր այն Տրդատն՝ երբ
 որ երկրորդ անգամ Պրիգորի հետ 15
 տարիէն ետեւ՝ եկաւ անաստական բա-
 գիններուն դիմաց , և զայն որ մայր զգաս-
 տութեան կ'անուանէր , ճանչնալով մայր
 մոլորութեան՝ հրամանեց ոչ ծաղկով ու
 տերեւով պատուել , հապա մըծով ու բըր-
 չով փլցնել , մանաւանդ թէ Վրիտտոսի
 խաչովն , և անոր տեղ կանգնել ճշմարիտ
 զգաստութեանց մօրն՝ Տիրամօրն աթո-
 ուր . և նաւասարդի 15^Է հաստատուե-
 ցաւ տօն Մտուածածնայ , որ կ'երեւայ
 թէ վերափոխմանն ըլլայ , ինչպէս որ
 ընդհանուր եկեղեցին ալ նոյն օրերը կը
 կատարէ այս տօնս : Երաւամբ հոս պէտք
 է կանչել Մնաստայ հին վարդապետին
 հետ . « () րհնեալ ես դու լուսանկար
 ,, առաքատ , որ շքեղաճոխ նազանօք
 ,, զօրացար՝ ի վերայ պատկերացն դրօշե-
 ,, լոց , և հարեալ խորտակեցիր զանսուրբ
 ,, պաճուճանս դիցանուէր և քաջապերճ
 ,, պանծանաց Մնաստայ տիկնոջ » : Մն-
 չուշտ այս տաճարիս տեղն կանգնուեցաւ
 արժանապէս Մտուածամօրն եկեղե-
 ցին , զոր թէպէտ յայտնապէս չեն յի-
 շեր մեր պատմիչք , այլ Պրոկոպիոս
 Յոյն պատմիչն կը վկայէ՝ թէ Ոսկեայ
 Վումանայի տաւրիական Մնաստայ մե-
 հենին տեղ՝ հիմայ եկեղեցի է , գիտեմք
 որ Մնաստայ արձանն ալ ոսկեղէն էր :

Երզնկայի հին դարերուն դիպուած
 ներն մութի մէջ մնացեր են , ամենէն
 ուրախ ժամանակն է ժ.Գ. և ժ.Ի գա-
 րերն . առջինին ետքի տարին 1300^Է
 ի արկոս Պօղոս ի ենեակեցի հռչակա-
 ւոր ճամբորդը առջինն եղաւ յԱրտաշա-
 րոց՝ որ հոս եկաւ և վաճառականու-
 թեամբ ծաղկած գտաւ քաղաքը . իրմէ
 վերջը իր հայրենակիցը Յովսէփատ
 Պարպարոյ 1471^Է անցաւ Երզնկայի ,

և գրեթէ կիսաւեր գտաւ քաղաքը քանի մը տարի առաջ պատահած երկրաշարժէն :

Լըզնկայի եկեղեցական յիշատակաց մէջ նշանաւոր են իր չորս կողմի վանքերուն բազմութիւնը, և անոնց մէջ ծաղկած դպրութիւնը . սրբոյն Աերսէսի մարմնոյն գտնուիլը և հոն փոխադրուիլը ժԳ դարուն վերջերը, Սարգիս արքեպիսկոպոսին ձեռքով, որ շինեց սուրբ Փրկիչ մեծ եկեղեցին և Տիրաշէն ուխտը, որոնց մէջ գրաւ սուրբ հայրապետին աջն ու ձախը, զոր աւերածուն Լէնկ-թիմուր քակեց փլուց :

Վաղաքական յիշատակաց մէջ նշանաւոր դիպուածներն ցաւալի են . զանազան (Վ)ուրք ցեղի իշխաններէ Լըզնկա առնուեցաւ շատ հեղ, և անոնցմէ իշխաններ նստան . ժԳ դարուն վերջերը Սարգիս արքեպիսկոպոսին որդին Պարոն Յովհաննէս իշխան էր քաղքին և աշխարհաշէն սիրելի ամենուն իր հօրը պէս . որուն հետ ողբալի մահ ունեցաւ՝ բռնաւորներէ սպաննուելով :

Լէւի նշանաւոր են Լըզնկայի գետնաշարժութիւններն, որ Վրիստոսի 1000 թուականէն վերջը կը յիշուին ինչուան մեր օրերը 20 անգամի չափ . որոնցմէ ումանք 30,000 հոգւոյ գերեզման ըրին քաղքին շէնքերը ամէն մէկ անգամուն : Լըկրաբաններուն կը վայլէ քննել և աս սասանութեանց կեդրոնն գտնել և ծածկուած հրաբուխ մը յայտնել :

Ուսումնական յիշատակով ալ նշանաւոր են Լըզնկայի ժԳ և ժԳ դարերը, որոնց մէջ ծաղկեցան Յովհաննէս Պլուզ վարդապետը, Սովսէս վարդապետ, Վրիգոր վարդապետ, Վէորդ վարդապետ, Լիրակոս վարդապետ Լըրեւելի՝ որ Յայսմաւուրը մը կարգաւորեց, և այլն : Լսյս ամենուն մէջ Յովհաննէս վարդապետը արժանապէս աւելի անուն հանեց, և որովհետեւ հայերէն դպրութեան նախնեաց ընտիր մատենագիրներուն մէջ ինքն կը սեպուի վերջինը՝ արժանի է որ Լըզնկայն չթողած քննենք յատկապէս կոչուած Լըզնկացին :

ԱՇԽԱՐՀ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուսումնական «ԲՈՅՆ» Յանգոյ Կոմպոսիւշայ :

Ո2 միայն արեւմուտք այլ և արեւելք հռչակուած է Սպանիոյ սրբոյն Յակոբայ Կոմպոստելայ ուխտատեղին, ուր որ հայաստանէն ալ շատ բարեպաշտ անձինք ուխտի եկած են, որոնց մէջ մեծ յիշատակաց արժանաւորք են սուրբ Սիմէոն Ճգնաւորն որ ժԱ դարուն ըսկիզբներն հոն ուխտը կատարեց, և Ստալիոյ Սանդուա քաղաքը մեռաւ և անոր պաշտպանն եղաւ . և մեր հայոց դժբաղդիկ վերջին թագաւորն Լեոն Զ :

Լըբոր առաքեալք աշխարհքները իրենց մէջ բաժնեցին, սուրբ Յակոբայ ընկաւ, ըստ աւանդութեան Սպանիացոց, հեռու աշխարհքներ ցրուած հրէաներուն քարոզելու : Ուստի ինքն ալ շատ աշխարհքներ երթալէն ետեւ՝ Սպանիա ալ եկաւ աս բանիս համար . և վերջէն երբոր Լըրուսաղէմ դարձաւ՝ հերովդէս բռնեց զինքը և սրով սպաննեց :

Սուրբ Յակոբայ նշխարքը շատ տեղ տարածուած է, գլխաւորապէս Փարիզ, Լնւերսա, բայց ամենէն աւելի Կոմպոստելայ որ Վալիցիոյ մայրաքաղաքն, և սուրբ Յակոբայ կարգի ասպետներուն գլխաւոր տեղին է : — Վաղղիացի ուխտաւորք սրբոյն եկեղեցւոյն մէջ մատուռ մը ունին, զոր իրենց թագաւորները ձեռք ձգեցին, եկեղեցին 23 մատուռն կամ խորան ունի . տալին ալ աւելի գեղեցիկ եկեղեցի մը կայ : Բուն սրբոյն Յակոբայ խորանը մինակ եօթը կարգինալ կրնան պատարագ ընել :

Կըսեն թէ սուրբ Յակոբայ դուխը Լըրուսաղէմէն Սպանիա բերուեցաւ Լչիփոնտոս կայսեր ատենը, և նախ դըրուեցաւ Վարրիոն քաղքին սուրբ Օղիլոս եկեղեցւոյն մէջ . վերջէն Լչիփոնտոսին մայրը Ուրրաք Կոմպոստելայ խաւրեց Տիտաք Կելմիրէզ Կոմպոստելայ առաջին արքեպիսկոպոսին ձեռքովը,